

ՀԱՅԵՐԷՆ  
ԺՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Արմեն

ՀԱՅԵՐԷՆ

891.99

9909

1-29

Կարո՞ւմ ե՞ս Դանիել

նշո՞ւ.

30.

891.99

2-29

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՅՈՒՑՎԱԾ Է 1981 Ք.

Հ Ա Ղ Ջ Ը

...դի լոյժ գեղեցիկ էր, եւ երգէր ձեռամբ.  
Ս. ԿՈՐԵՆԱՅԻ ԳԽԵՐ Բ.



Հ Ա Ղ Ջ Ը

Հ Ա Ղ Ջ Ը

1946

1946

5555  
A  
1  
6087

**ДАВИՅԷՆ ԵԱՐՅԱՆ**  
**Ն Ա Լ Օ Ջ Ո Ց Ա**  
(Նա Արմյանսկոմ յազկե)  
Արմգիզ, Երեւան, 1946 թ.

Ա.

Գարնանամուտ երեկո մ'իր պալատին մեջ մարմար  
Բակուր, Մյունյաց Նահապետ, շքեղ հանդես մը կու տար,  
Երբ Ուղեոր մը հանկարծ մըրըրկարշավ կը հասնի  
Լուսընկափայլ ճամբայեն՝ մեծ դըրան քով արքենի:  
Ձին կը հեռ, ու բերնին փըրփուրն՝ հողմեն միշտ խլված՝  
Կը թըրջե թամբն համորեն, ասպանդակներն ոսկեմոծ:  
Հեռուներեն ան կու գա, դայս կը մատեն թե՛ փոշին,  
Որ դիզվեր է խավերուն մեջ թիկնոցին թավիշին,  
Թե նըժույզին վըրընջյունն աստեղացունց մաքրությամբ՝  
Որ կը խընդրե ախոռին գոլուտ հանգիստը անթամբ:  
Բակուր այդ հյուրն իր անձեն և անունեն կը ճանչնա.—  
Բագրատունի Տըրդատն է, հըզոր իշխան, ու փեսա  
Տիրան հայոց արքային, որ կը փախչի Մարաստան.  
Կը փախչի ան՝ զի կինն իր, Տիրանի դուստրն աննըման,  
Գանաղիծեր էր խստիվ, պալատեն դուրս արտաքսեր,  
Ուղեկով, իբր անարգանք: անոր խարույաշ գանգուրներ:

— «Տրդատ, կ'ըսես Նահապետն, այս գիշեր քուկդ է իմ տուն.  
 Մարաց աշխարհն հեռու է, և դու անշուշտ պարտասուն.  
 Մըտիւր սըրահը տոնին, թող իրարու գեմ փըշրին  
 Մեր բաժակներն, ու մեր սերը մըկըրտես թող գինին:» —  
 Եվ կոչունքի կը բազմի Բագրատունին վտարանդի  
 Աջ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կը նըստի  
 Գահի մը վրա՝ որուն լայն թիկնատեղն է քանդակված  
 Բագոսը՝ եղ մ'որթերով պըսակելու ըզրադած:  
 Սեղանին շուրջը արդեն Մեծամեծներն հայկազուն.  
 Դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն  
 Աստիճանին համեմատ, այլ սուրերու մեծության:  
 Հոն են ճորտերը Սյունյաց դավաճներուն երկտառան,  
 Լեւոն աղատ դավակներ, միշտ զըահի մեջ կուրծքերնին՝  
 Որոնք հըզոր կումբի պէտ ջահերուն տակ կը փայլեն:  
 Հոն կան նաև բըղեշխներ, ազատանին քաջարի՝  
 Որ կը պատմեն թե ինչպեա կ'որսան վարազը վայրի:  
 Ազնւթառոհմ սեպուհներ ոսկեճարմանդ խլաներով,  
 Գինվը բաժակ ի ձեռին կը ծիծաղին կեա գինով:  
 Պալտաին մեջ ծով մը կա ծիծաղներու և լույսի՝  
 Որ գաղջորեն ծուփ առ ծուփ դռներեն դուրս կը հոսի:  
 Կոչնականները զարմիկ պատերն ի վար կախեր են  
 Որսի գալար շեփորներն ու վահաններն ոսկեղեն.

Եվ նիզակները, դեռ թաց վարազներու արյունով:  
 Տըրձակ տըրձակ կը հանդէին հըսկայաիեղէ դըրան քով:  
 Լայնակոնք սրահը քըսան սյուներով է կառուցված՝  
 Որոնց վրա կը շողան քըսան ջահեր դեմ դիմաց.  
 Եվ այն քըսան սյուներուն մեջեն քըսան գերիներ  
 կը բերեն թանկ սաներու վըրա՝ խորված երեսներ՝  
 Որոնց շոգին քըմպարար կը բարձրանա ոլորուն  
 Ջահերուն շուրջ կազմելով խըլատեներ ծրփծրփուն:  
 Ըսպասներն ալ սեղանին մեծարժեք են. և կարծես  
 Արծաթազօծ դըգալներն ու գանակները նույնպես  
 Փողիտողումին տակ լույսին փայլակներ են աղըմկոտ՝  
 Որ կը ծփան դիպակյա նըվարտանին վրա փութկոտ:  
 Ծաղկակալներ են դըրված երկայնքն ի վեր սեղանին,  
 Որոնցմէ եղկ բուրումներ շուրջը արըշիւ կը սփռին.  
 Ծաղիկներուն ընդմեջեն, քըրքիջներուն հետ թըրթուուն,  
 կը նըշմարվին ըսպիտակ ակռաներն հույր ճորտերուն.  
 Եվ գինիին թանձըր հոտն և խահերուն գոլորշին  
 Վեր բարձրացած՝ կը սքողեն կատաղությունն այդ ճաշին:  
 Կու գա համեղ գերերին՝ որով Սյունիքն է տաառ,  
 Զոր եփեր են տատրակի սըրտիկներով անարատ:  
 — Աղաջիւի սիրտ ուտենք, կը գոչե ճորտը Բալի,  
 Որ ունենանք վագրի լյարդ:» — «Ես այդ մասին ավելի,

Կը կատակե հանկարծ մին, կ'ընտըրեմ սիրտը կընոջ: —  
 Ծիծաղներով այն ատեն կից վերնատունը ամբողջ  
 Կ'ալեկոծի, ուր ժողոված հայ տիկիչները բազմական  
 Կ'ընեին նույն խրախճանքները նույն շուքով տոնական:  
 Այն ատեն ներս կը մտնեն երկու ջուխտակ գերիներ,  
 Կրելով երկու ջուխտ վարադ՝ սաներու վրա ոսկեհեռ.  
 Եվ ուրիշները նույն թիվով՝ իրենց ուսին վրա ունին  
 Ըսկուտեղները նուռին, սալիորներն հորդ գինիին: —  
 Հաղթանակն է այս խրախին: Հեղեղ մ'հանկարծ վարդերու,  
 Իբրև ամեն տիկին վար արձակեք սիրտն իր աղու,  
 Վերնատունեն կը տեղան կոչնականաց վրա գինով:  
 Քանի մ'ասպետ կը կոփեն վահանն իրենց աշտով:  
 Աղաջիներ ավասիկ կամարին տակ կը ճախրեն,  
 Եվ ծայրն իրենց թևերուն մըխըրճելով ծուլորին.  
 Շատըրվանին մեջ՝ որ լույս կ'ողբա բակին առնթեր,  
 Կու գան իրենց թուիչներեն վար անձրեկ մարդրիտներ:  
 Ու վարդ, տատրակ հոն խառնված հեղեղներով ճաճանչի  
 Կ'ստեղծեն դրախտ մ'ուր կարմիր Հեշտության նուռը կ'աճի:  
 Մատընակներ ավասիկ կարապնավիզ սալորով  
 Բաժակներուն մեջ գինին կ'հեղուն գեմքով մ'անխըռով:  
 Բագրապունին այն ատեն, կորովարիք Տրդատեր,  
 Դաշխուրանն իր վեր կ'առնու, և, — «Աստղետներ, կ'ըսե, ես

Վանատուրին սերմնահորդ, և տըռփածոց Աստղիկին,  
Անոր՝ որ հուրն է արու, անոր՝ որ հողն հեշտագին,  
Կ'ըմպեմ ի փառս: Անոնց տուփն ու համբույրները հավետ  
Այգիներուն մեջ ձեր թող ծավալանան ծաղկավետ:» —

— «Ձեր Թագավոր աներոջ, կ'ըսե Բակուր, սուրբ կյանքին  
Ըմպենք, որ մեզ կը պահե խաղաղության մեջ հեշտին:» —

— «Թագավորին, որ կ'հանգչի, աղաղակեց ճորտ մ'հանկարծ,  
Ջյուններուն մեջ Մասիսի:» Այս հայտնությունն հեղակարծ  
Ներկաները սպշեցուց: — «Մեռավ Արքան մեր հայոց...» —

— «Արդ իր դիակը կ'իշխե հավերժանիստ սառին ծոց:

Գուժկան մ'երեկ ազուպի երազությամբ հոս հասավ,

Պատմեց թե ինչպես Տիրան խեղդելած է բըքազրավ:

Կ'ըսեն թե թագը միայն ձյուններեն դուրս է ֆնացած,

Որուն վըրա կը շողա դեռ հայ արևը Մասյաց:» —

Շրթնան ըրավ սև լուրն այս պալատին մեջ բովանդակ

Գինեփըրփուր բաժակե մ'ավելի կ'ըս արագ,

Որ միմիայն արբեցուց բերկրանքներով անպատում

Տըրդատի սիրտն՝ որ մինչև արքային մահն էր տըրտում:

— «Խըմենք, ըսավ, ու տոնենք Արշակունի գահերուն

Թավալուններն անդունդի և մեղկանքի մեջ փըցուն:» —

Եվ հաղիվ հազ շըրթներուն դըրավ դավաթն հրահոսան՝

Վերնադառն մեջ աչքերն իր գույգ մ'աչքերու դիպեցան:

Կին մը իրեն կը նայեր, կը զգար սրբաին մեջ շրմոր,  
 Իր կազմին վրա կ'հիանար, առնագեղ, խրոխտ և հըզոր:  
 Հըզոր՝ վիզովն առյուծի և բիրերով աստղահեռ՝  
 Որոնց բոցեն այրելու համար անգամ մ'իսկ բավ էր  
 Որ անոնց մեջ հանգըզներ առնաբաղձ կին մը նայի:  
 Հըզոր՝ մարտիկ գըլուխով, լայնշի լանջքով անարդիլ՝  
 Որ ճռչանին մեջ կ'ուռեր կոհակի պես փըրփրագեղ,  
 Հըզոր՝ թիկնով մեծադիր, բազուկներով առնագեղ՝  
 Որոնց միջև կը սիրեն կիներն իբր օձ գեղածալ  
 Բյուր ձևերով գալարվիլ ու ծըվարիլ ու տաքնալ:  
 Վերնատան կինը սարսուռաց: Տըրգատ մեկ ձեռքը հենած  
 Սեղանին վրա, մյուսով տաշտը բերնին, գըլխիբաց,  
 Անոր կապույտ աչքերուն հառած աչքերն իր մըթին՝  
 Խըմեց երկաթ—փըրփուրեն մինչև մըրուրն—իւր գինին:  
 Հետո ծոցեն դուրս քաշեց խուրձ մը դեղձան մագերու  
 Մութ ամպեն դուրս մացառվող ճաճանչներու պես աղու-  
 եմ անով իր գինիոտ բերանն աղեկ մը սըրբեց...  
 Անոնք մագերն էին իր գոռոզ կընոջ՝ զոր բրածեծ  
 Ըրավ ու ճյապես ահա ծաղրեց այն էգն անուղղա,  
 Եվ ապշեցուց ամենքն այդ իր անսովոր գործին վրա:  
 Հագիվ Տըրգատ սեղանին դըրավ գավաթը թափուր՝  
 Լույսերու հոծ ծովուն մեջ թնդաց սըրահն ընդհանուր:

— «Վարձանքն տհա, տեղ բացեք, վարձակը, վարդ տեղացեք,  
 Մագերուն մեջ, ոտքին տակ մարգարիտներ լեցուցեք:» —  
 Սանդուխներն վերնատան վար կ'իջներ կին մը խաժակ.  
 Կը թըրվոային գըլխուն շուրջ աղավիններ ըսպիտակ:  
 Հաճանչավուխտ քողին մեջ աստըզ մ'էր ան՝ որուն մեծ  
 Աչքերուն մեջ սևեռուն Տըրդատ գինին իր խըմեց:  
 Այն ժամանակ սրահ մըոտան հինգ ծերունի գուսաններ,  
 Ուսերնուն վրա վիժանուտ գանգուրներով լուսահեր. —  
 Ուրաակեց տավիղն հեշտ, փանդիուն հնչեց փառակոչ,  
 Նըման արծաթ կարկուտի՝ երգ ջաղբեց դափը դողդոջ.  
 Եվ յոթնադի քընարին որովայնին մեջ տոսախ  
 Նըվագի ծով մ'ըսկսավ մըրըրկոտիլ աղերախ:  
 Հետո հանկարծ միացած բոլոր լարերն իրարու  
 Պանծացուցին անգամ մ'ալ փառքերը հին դարերու,  
 Երգը հըզոր դիքերուն, Դիցուհիի ոսկեմայր,  
 Երգն աստղահմա քուրմերուն՝ որոնք բազնին վրա մարմար  
 Վըզան օծեր այրեցին բոցերուն հետ ծառացու.  
 Երգն՝ ասղետի մը դարմիկ, դուցազներու գինաշող  
 Որոնք նըման կայծակի տեգերն՝ իրենյ պիրկ ձեռքին՝  
 Փաղանգներուն կազմը կուռ արյունառուշտ ձեղքեցին,  
 Հընչեցուցին երգերն հուսկ մեհենական պարերու,  
 Մերն հայկազուն կույսերուն և հարճերուն գինարբու՝

Որոնք այգավուն զովալից հովանիին տակ պառկած  
 Լույս ծոցն իրենց կը թողուն սեպուհներուն համար բաց:  
 Կոչնականները համուռ դեպ գուսանները դարձան,  
 Որոնց մեջ տեղ ըսկըսած էր պարել կին մը գեղձան:  
 Վարձակն էր ան, նազենիկ, նազելագեղ անուշով:  
 Հասակն ամբողջ կը թըրթռար բարտիի պես հողմախոտով.  
 Դաշներգը իր ջիգերուն դաշներգին հետ լարերուն  
 Կը միանար, կը սըփուեր համանըված մ'հարաճուն:  
 Յոթն հարճեր, հերքը խարտյաշ, մատվըներով նախանձուռ  
 Արաբական յուղի մեջ օծաներ են քաղցրահոտ.  
 Եվ գըլխուն շուրջը պըսակ մը վարդերու հյուսեր են՝  
 Որոնք եթե ճըզմըվին անշուշտ արյուն կը ծորեն:  
 Կը շողշողան ունկերուն ծայրը օղեր փողփողեջ  
 Առողներու նման ցոլալով անրակներուն փոսին մեջ.  
 Արմուկեն վեր աջ բազուկը կը խածնե սեղմորեն  
 Լուրթ մարգըրիտով հելուզված անարանջան մ'ոսկեղեն.  
 Իսկ վիզեն վար մինչև ծայրն ըստինքներուն սեպուտուէր  
 Կը բոլորվի վառ մանյակ մը լույսերով հեղհեղուէր.  
 Եվ այնքան նուրբ է զառքաշն՝ որ կը բըղխե դեպ ի դուրս  
 Ազդերներուն զաղջությունն և կաթնագույնը սընդուս.  
 Մուճակներուն մեջ խարտեշ կաղապարված ոտքերն ա՛լ  
 Դուռլթ տալով կը սկըսին հատակին վրա պար դառնալ:

Կոչնականները լըռիկ հիացումով քարացած,  
 Մարմնակարկառ, ապշուպալ, աչվըներով լայնարաց,  
 Կը դիտեն զինք:—Նազենիկ նախ կ'օրորեն մեղմորեն  
 Ալապաստրեն ուսերուն վըրա գըլուխն հըրեղեն՝  
 Ներկաներուն շըրջելով զույգ մը աչքերը աղվոր՝  
 Ուր կ'ընկզմի մարդ հեշտին, բայց դուրս կ'ելլեն վիրավոր:  
 Վեր կը վերցնեն հոլանի բազուկներն իր հուլորեն  
 Լայնշի քողին կապուտակ խաղաղության ընդմեջեն,  
 Զույգ մը տոսախ բամբիռները մատերուն մեջ ճարտար  
 Հանկարծակի կը հընչեն, կ'ըլլան պարին կառավար:  
 Մարմինն ընդհուպ կը գոփա, կու տան ոտքերը դըռութ,  
 Եվ ան իր իսկ շարժումին անդունդին մեջ հորձանուտ  
 Կարծես վայրկյան մը այլևս աչքերն կ'անհետի՝  
 Ինչպես երկնի մեջ կոբսվող լուսադայլայլ մեղեդի:  
 Օ՛ այդ մեծ պարն հեթանոս՝ որ Աստղիկի կը ձոնեն,  
 Գեղեցկության այդ աղոթքն, աղսթքը այդ մըսեղեն.  
 Օ՛ այդ իրանը ճապուկ ելեծոֆը ըստինքին՝  
 Որոնց մեջ կաթն իսկ կ'եռա հուզումներեն սաստկագին.  
 Օ՛ թևերն իր լուսածղի՝ օձերու պես պարարակ՝  
 Կարծես երկար կըթըված կախարդ սրինգով ներդաշնակ.  
 Եվ զիստերն իր սարսազեղ, գեր երաստանը շամբույշ.  
 Եվ բոլորին իբր առանցք մեջքն ուռիի պես քընքույշ՝

Որուն շուրջ մարդ պիտ' ուզեր բաղեղի նման փաթթելիլ  
 ել վերջապես հյուսթառապառ բաղեղի նման թառամիլ:  
 Բամբիւններն իր կը հընչեն ձեռքերուն մեջ սաստկորեն  
 Իրբև օրենք մարմինին բյուր ձեւերուն հոյաշեն:  
 Բամբիւններն իր կը հնչեն ու անոնց երգը բյուրեղ  
 Կը քաղցրանա մեղրի պես ջահերուն տակ լուսաղեղ:  
 Եղունգներով հինաշված մատերեն վար աղածրի  
 Դաշնակություն մ'հրաշալից մաղերուն մեջ կը ծորի:  
 Բամբիւններն իր կը հընչեն, այնքան ճարտար՝ որ կարծես  
 Անոր ձեռքերն Ապոլոն թաթախեր է տարփակեղ  
 Սըրտին մեջ իր տալիսին: Գործիքին ճայնը կերկեր  
 Կը զեղու որահն՝ ուր շատոնց գոռաններն ալ չեն նվագեր:  
 Կոհակներուն մեջ լոգցող աղկիոնին հանգունակ  
 Ան կը լողա մատերուն երգերուն մեջ ներդաշնակ՝  
 Որոնց ի լուր տատրակներ ահա կու գան խառնովիլ  
 Յանցին մեջ իր մաղերուն, իր մաղերուն հիատեսիլ՝  
 Որոնք, ալիք առ ալիք, կ'երթան ուրփուիլ ման ի ման  
 Ասպետներուն գըլխուն վրա արշալույսի մը նման:  
 Կոշնականները գինով մեջ թաթախված, տըռփագին,  
 Բոլորը լուռ, սալացած՝ ըզմայլանքեն գեղեցկին  
 Կը դիտեն մըրիկն այդ կընով գանգուրներուն մետաքսե:  
 Ան կը ճախրէ, կը ճախրէ, կատաղորեն կը ճախրէ:

Երբոր ետև կը թեքի՝ կուրծքին վրա հոյաշեն  
 Բըլուրի պես կը դիզվին ըստինքներն իր սարսալեն.  
 Եվ վարսերն իր վիժանուտ, ուսերն ի վար հոսելով,  
 Կ'երթան փրփրիլ հատակին, հոն կազմելով ոսկի ծով.  
 Ան կը ճախրե, կը ճախրե, ոռնձակոտոր կը ճախրե...  
 Հոգվույն մեջ՝ ծով, շուրջը՝ լույս, ան Կիպերյան Աստղիկն է՝  
 Որ իր հորս կոզմն հավաքած աղափնինբը լուսեղ  
 Փորձեր կ'ընե թռչելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ,  
 Ու հեհեուեն, ծիծաղկոտ, վարդի մը պես բըռնկած,  
 Վերջին թափով կը սուզի կապույտին մեջ վերասլաց,  
 Թողլով որ քողն ամպերեն հորձանապտույտ իյնա վար  
 Տիոնիոյան բազնին վրա, գինիին մեջ հըրավառ:  
 Այսպես պարեց վարձակն ալ, մինչև որ քողն հոգիին  
 Հոն թաթախեց դիրտին մեջ ամեն մարդու բաժակին:  
 Ալ հոգնած էր ու քըրտնած, կ'ուռեր ծոցն իր լուսեղեն,  
 Երբոր վերջին ճախրին մեջ Տըրդատ բըռնեց բազուկեն  
 Եվ ծունդին վրա՝ նըստեցուց, գզվեց գըլուխն ոսկեհեր.  
 Վարսերն ի վար շիթ առ շիթ կը ծորեին քըրտինքներ.  
 Զեռքերուն մեջ դեռ տենդոտ, Բազրատունվույն ճռչին վրա  
 Կը դողային բամբուկներն իր մաքմույն պես գյուրազգա:  
 Տըրդատ մատերը անոր համբուրելով մի առ մի  
 Եվ շամբշելով անոր հետ զերթ սեղեխներ վաղեմի.

«Նահապետ, ով է—բայտ—վարձակը այս լուսաստինք։  
Եթե Աստղիկ երկնի մեջ Վահագնի օր մ'հանձնեք գինք,  
Ու կաթիլները սերմին ըլլային նույն իսկ աստղեր՝  
Դարձյալ այսքան չըքնաղ ծնունդ մը երբեք չէր բողբոջեր։  
Այս կինն ինձ տուր, իթի չէ օրենս՝ որ մենք բնենք վեճ.—  
Երշալույսին թող մեկնիմ՝ արշալույսն այս գրկիս մեջ։» —  
Բաղմականներն բակըսան նախանձահույզ քրքրքրալ.  
Բակուր ծածուկ մախանքե մ'աղաւանդն իր ձյունափայլ  
Սեղմեց. և նուռ մ'որ ձեռքին մեջ բռնած էր այն ատեն  
Ըսկծանքին ըսկծաով ճըմլել։ Ըսավ.— «Իշխան քաջագին,  
Վերաց երկրեն, ուր կինները կը ծաղկին վարդի պես,  
Զայն նիզակովս եմ շահեր, մարտիկներու ընդդեմ վես  
Մղելով երկար սրայքարներ։ Այժմ նեբե, որ ըսեմ՝  
Թե իմ հարձա է, և չըլլար քեզ աղախին մը նըսեմ։  
Եթե կ'ուզես՝ որ մեր զույգ բաժակներն այս մըտերիմ  
Հագիլ թափուր գինիե, չեցվին արքամը ոխերիմ՝  
Թո՛ղլայն, իշխան»։ Բնավ չանսաց Բաղբատունին սըրարբաս՝  
Սեղանին վեր բարձրացուց դաշխուրանն իր գինեմած  
Ու <sup>ն</sup>ձեռքովն իսկ զայն խմցուց՝ ծունդին վըրա, վարձակին՝  
Որ կը ժըպտեր ըմպելու ատեն ժըպտով մ'հեշտագին։  
Իր <sup>ն</sup>գողտըրիկ բերանին հրկու կողմն ընդհուով՝  
Թափեցավ քիչ մը գինին ու ծոցն ի վար սահելով՝

Գրնաց լճակի պես կարմիր ժողովի պորտին մեջ անհայտ.  
 Երբ դեռ բոսոր էին կզակն ու շըրթունքները, Տըրդատ  
 Զանոնք առած բերանին մեջ համբուրեց կըտզանքով՝  
 Զվարթ հեղուկին մնացորդն ըսպունդի պես ծըծելով:  
 Լըռեց սըրահը համուռ:— Բոլոր դարձած Բակուրին  
 Կը նայեին, որ կը լմեր դեռ նուրը մեջն ագուռին:  
 Ամեն մարդ հոն թափվելիք արյան մը հոտը կը զգար...  
 Նահապետն ալ վեր ցատկեց տեղեն իբրև քանասար:  
 Գրնաց որ հարձն ազատե, ջախջախե գըլուխն Ասպետին՝  
 Բը կինն իր տան մեջ կը լլկեր՝ իբր իր ողկույզն իր տաշտին:  
 Այս որ տեսավ Տըրդատես՝ վարազացավ ու խոպաց.  
 Հրեղեն սյունի մ'էր նըման, դահլիճին մեջ՝ վերամբարձ.  
 Կողիճներուն մեջ աչքերն ըսկըսան ժիր թավալիլ  
 Մերթ ծովուն խորն ընկուզվող գունդերու պես հրատեսիլ:  
 Զախ թևով հարձը գըրկեց, հետո— «Հա, հա, քըքըջաց,  
 Էգ վագրին հոտն ըմբռնենլ արու վագրին է տըրված:» —  
 Եվ միշտ ժայռի պես կանդուն, շընչելով բոց աչքերեն,  
 Հուժկու ձեռքով սեղանին վրայե խըլեց, իբրև գեն,  
 Մ'Ժաքանդակ ըսկուտեղ մ'ամբողջ պղնձով կուռ ձուլված,  
 Դադանացավ, փըրփրեցավ, շամբըռեցավ ու մըխաց.  
 Եվ ուզակի արձակեց զայն Բակուրի ճակատին...  
 Վերնատան մեջ անեղ ձիչ մ'արձակեց տան տիրունին,


Ճորտ ու սեպուհ բոլորն ալ դուրս պուղեցան զահանգած.  
 Որոնց բազուէն էր միշտ վատ՝ երբ հոգին էր սըրարբած:  
 Սակայն կաբլնո մըրգակալն այն վրիպեցաւ հըրաշքով,  
 եւ Բակուրի լոկ մեկ ունէն արյունառուշտ խըլելով՝  
 Դրնաց բաղխիլ գիմացի մարմար սյուներն մեծադղորդ՝  
 Թոթափելով անկե վար կուճեր, կայծեր լուսահորդ:  
 Ոմանք սատար փութացին Նահապետին կարեեր՝  
 Որոն խըլված ականջին, ճըմլված քունքին կը հոսեր  
 Հոն գինիի սափորին՝ մեջ արյունն իր թըխագուն:  
 Այն ժամանակ Նաղենիկ սարսափահար, հանկարծուն,  
 Փաթաթվելով Տըրդատի պարանոցին՝ ողողեց.  
 — «Այս հարկին տակ, ո՛վ ասպետ, ալ բաժինս է գան ու ծեծ.  
 Դուն ո՛ր գիտցար զիս վտանգել, աղատե արդ շուտափուշթ  
 երբ ես հոժար խըմեցի ձեռքդ գինին քու սիրույդ՝  
 Հարկ է ասկե վերջ խըմեմ Բակուրի թոյնն ոխության.  
 Դուն հոս արյուն թափեցիր, և պիտի ես քալեմ զայն:  
 Զիս հեռացուր այս երկուն, եթե չէ դորձ մ'արքնի  
 Որ ասպետի մը վրիպած հարվածը կին մ'ընգունի:» —  
 Ու ավելի ցած ձայնով հարեց. — «Ես քեզ կը սպասեմ  
 Արշալույսին՝ որ մոտ է: Մեծ դըրան քով արեգդեմ  
 Կա թուղի ծառ մը՝ որուն սաղարթներուն ընդմեջն  
 Պատուհանիս ճըրագն առկայծ ճամբորդներն հար կը տեսնեն:

Հոն կը սպասեմ ես քեզի վարդենիի մը նման,  
 Որ կողոններն իր բանա պիտի կուրծքիդ վրա տիտան:» —  
 «Ձիուս առջի խըրխինջն պատրաստ եղիր, Նազենիկ,  
 Դեռ ճրագդ արփուլն շառայլեն չընըվաղած՝ կը մեկնինք:»  
 Ըսավ Տըրդատ: Թուրը մերկ միշտ ափին մեջ շողարծարծ,  
 Տալով կամա երևույթը մեկնումի մը անդարձ,  
 Գընաց թամբեց երիւթն ու խավարին մեջ, անտես,  
 Անհետացավ քառատրոփ, փայլահնացայտ ամպի պես:

Կոչնականներն ահաբեկ, կոչնականներն հիազարհուր,  
 Գինով ու վնտ, մի առ մի պարպեցին սրահն ընդհանուր.  
 Լոկ կույր գուսան մ'երգին մեջ անսկերադարձ տեսացած՝  
 Դեռ լուրթյան մեջ կը նվագեր սյունի մը հաղթ կռթընած:

Բ.

Ահա առավան շողերեն հագեր է վարդ ու սուտակ  
 Պատուհանին առջևի թրզենի ծառն ընդարձակ՝  
 Որուն ետև հարձն արթուն. — «Ինչո՞ւ չեկավ» — կը խորհի, —  
 Արտույտն ահա արձակեց կալին մեջ երգը բարի.  
 Եվ պալատին պահապան շունն արթընցած ման կու գա



Բակին մեջ մերթ միգելով պատերն ի վեր շրջակա:  
 «Ինչո՞ւ չեկավ, ո՞վ երկինք:» — Հորեղոսն հեղակարծ  
 Արփուլոյն ճաճանչն անդրանիկ սլացավ ինկավ շողարծարծ  
 Նազենիկի խուցին մեջ. — դալկացավ լույսը ճրագին:  
 Օ, ի՞նչ խրխինջ, ի՞նչ դոփյուն, ի՞նչ փոթորկում թանկագին...  
 Կու գա իշխանն ազատել զինք Բակուրի նախանձեն:  
 Պատուհանին ներքև է Տրդատ ձիուն վրա արդեն:  
 Բերկրանքեն հարձը խայտաց. զեղան աչքերը վրդով  
 Անպատմելի խնդրությամբ, ինչպես երկինքն՝ արևով:  
 Գիշերն ամբողջ ինք հոն էր, զով խավարին մեջ արթուն,  
 Հանդերձներովը պարի, բամբիռներն ալ՝ մատերուն.  
 Աստղերուն տակ աղոթող բազոսուն՝ մ'էր նման՝  
 Վարդերը դեռ հանդեսին մաղերուն մեջ ցիրուցան.  
 Եվ լանջքը մերկ՝ որուն վրա թափված գինին խըրախին  
 Տակավին միշտ կը սըփուեր իր զըվարթ բույրը չորս գին:  
 — «Ձեռքդ երկարե», — ըսավ Տրդատ: — «Դու գիրկդ բաց, կը  
 ցատկեմ:»  
 — «Գըլուխդ, ըզգե՛ւյշ, չըփշրես լանջապանիս զրահին դեմ:» —  
 Եվ Նազենիկ անհամբեր հեղեղին հետ վարսերուն  
 Ասպետին մոայլ ծոցին մեջ նետեց ինքզինքը սարսուռն,  
 Եվ դայն հեղ մ'ալ ուղղեց մաղերովն իր դարալիր:  
 Դափրեց նըփույգն և ուռնդերը փեռեկած լայնալիդ՝

Հորիզոնին դարձուց գլուխն ու մըտրակի մ'հարվածով  
Թաղվեցավ իր արշավին ամպրոպին մեջ փռեցծով:

Փառք մեծագոր կենցաղին ասպետական դարերուն՝  
Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորությունը արբուն,  
Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցիկին, Զորության՝  
Փըրփուրներու Դիցունին ըստինքներով ոռչնական:  
Փառք ձեզի միշտ, գանգրաներ ո՛վ ասպետներ արգընկեց,  
Որոնց զբահով վերաբված լանջքերուն տակ բարախեց  
Սիրտ մը հավետ անձնըվեր՝ տըղարներուն, ընկճվածին,  
Եվ գեղանի կիներուն, անոնց մարմնույն բյուր գանձին:  
Փառք ձեզի միշտ ձիամարտեր, մկունդխաղեր շանթասուլայ՝  
Որոնց օդին մեջ շաչուն տեղերն հանկարձ բըռնկած՝  
Կայծակներու խաղն եկան երկրիս վրա փոխադրել:  
Վիշապասպան սուսերներ, ժանգոտակու անընդել,  
Կառարշափներ փռչեմուղ, դուպարահաղթ ոգորներ  
Շառափնաթափ տեղ տեղի, կումը կումրի դեմ ոսկենկու:  
Փառք ձեզի միշտ, ո՛վ որսեր, թըրթուուն ձայնով շեփորին,  
Երբ լիճին քով վերավոր կ'իյնա եղնիկն ողբազին,  
Եվ վարազներ արգնահար կը թավալին մարգին վրա՝  
Որոնց կողեն արյունն հորդ կըրակի պես կը մըլխա:  
Փառք ձեզի միշտ ավարներ, հափափուեմներ կիներու՝

Որոնք տըլին իրենց տարին ու համբույրները աղու  
 Առյուծներու քաջության, և ո՛չ ոսկի հորթերուն,  
 Որոնց սըլտերն տուով լոկ սուրերու ծայրը փաղփուռն:  
 Փառք ձեզի միշտ, ո՛վ դարեր առպետական կենցաղին,  
 Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նըման գինիին:  
 Առաքինի քաջության տեղ նենգն այս օր կը տիրե.  
 Փոխան տեգին հողանի՝ պատյանի մեջ դաշույնն է՝  
 Որ կըշողա մութին մեջ, կը ժանգոտի արեին.  
 Ոճիրներն արդ խավարի լըռության մեջ կը դարբնվին  
 Մըխոտ ճրագի լույսին տակ ծըռած գունատ մարդերեն:  
 Երբ արեգակը նընջն՝ մեղքերն հայնժամ կը գործեն:  
 Ձեն պաշտեր կնոջ մարմինին դաշըն ձեերն հըրահըռտ՝  
 Լոգցըլած բյուր ջահերու շառայլներով հոռանուտ:  
 Կինը մարդուն միացնողը Աստղիկի սիրահող  
 Լուսեղ մատերը չեն բնավ, այլ շանսըխուրը ցեխոտ:  
 Գեղեցկությունը ծընունդն է Զորության հորձանքին՝  
 Ինչպես մարգրիտն օվկիանի անդունդներուն մոլեգին:  
 Բայց այսօր չեն քանդակեր սուսերներով կորովի  
 Գեղեցկության սուրբ Բազինն՝ ուր իզուրթյունը խընկվի:  
 Բավական է լի գավաթ մը Մյունիխի գարեջուր,  
 Որ աճուրդի հանված սերը գնեն մարդիկ քրեիքուր:  
 Սեր վաճառված, ոչ նվիրված՝ ինչպես պըսակ սարդենի

Զոր հերոսին համար սուրն աստվածներեն կ'ընդունի:  
 Եվ այժմ մարդն այս դարուն, մարդն ըզեղին տակ կըքած,  
 Ո՛վ ասպետներ հեթանոս, եթե բաղխե ոտքն հանկարծ  
 Զեր բազուկի մեկ ոսկրին՝ որ հողին տակ ճերմկած է,  
 Անոր հըսկա զանգվածեն կը սարսափի, կը կարծե  
 Չեզ առասպել դարերու առասպելյալ զազաններ,  
 Ո՛վ ասպետներ հեթանոս, ո՛վ ասպետի ոսկորներ:

## Գ.

— «Տես, Նազենիկ, ինչպես դաշտն ըսպառեց ձիս վըզանուս,  
 Ա՛յնքան երազ՝ որ կարծես մոխիրի մեջ բոցանուս  
 Մըմբակներն իր խըրվեին: Ան հպարտ է, իմ Սիրուն,  
 Երբ այդ մազերըդ խառնված կը զգա իր հորդ բաշերուն:»

— «Ո՛վ իմ ասպետս և իմ քաջըս, մըտրակե անդադրում՝  
 Մինչև որ սա անիծված Սյունյաց սահմանը թողում:  
 Սարսափն է դեռ սըրտիս մեջ, բայց մեն մի դուռլթը ձիուդ  
 Հոգիիս մեջ կը սպաննե երկյուղի տրոփ մը անգութ:  
 Ո՛վ իմ ասպետս և իմ քաջըս, մըտրակե, անդադրում:» —  
 Այսպես անոնք խոսելով՝ հըրճվանքով մ'անպատում  
 Կ'արշավեին դեպ Շիրակ: Տըրդատի լայն կուրծքին վրա  
 Կը հանգչեցներ՝ հարճն ամփով՝ գըլուխն իբրե լուսընկա.  
 Մերթ ոտքերն իր կը զարներ ձիուն փորին տըղընդեր,

Մերթ Տըրդատի անութին տակեն հտե կը նայեր,  
 Հորիզոնին շըրջելով կապույտ աչքերն՝ որոնց մեջ  
 Բերկրանքներ կը հյուսեին շողերն առեչ առ առեչ՝  
 Միշտ մեծցնելով հույսը զվարթ՝ ծախված ճամբուն մեծու-  
 թյամբ:

Շանթ կը տեղար արեգակը երկընքին վար անամպ,  
 Իր տոթին տակ խեղդելով կենդանությունը շուրջի-  
 Կարծես հողին մեջ զոդված ըլլար ամեն մեկ ճըճի:  
 Մի միայն մերթ կը լավեր բըզզոցը թափ զամբուռին,  
 Որ ալ հոգնած ընդերկար հալածելէ կենդանին՝  
 Արշալանքին փռչվույն մեջ կ'անհայտանար խորամուխ:  
 Անոնք իբար փաթթելով կ'ամբարտակեն սարին գլուխ:

Սուլ դըրնդուն մը հեռվին եղավ հանկարծ լըսելի,  
 Կարծես գետնին ընդերքին անցներ ամպրոտ մ'ահռելի:  
 Տըրդատ շրուշակը դարձուց, և երիվարը խոկուն  
 Ծամծմելէ դադրեցավ պահ մը լըկամը փըրփրուն:  
 Վարը, դեմի հովիտեն դեպի դազաթ ծառացան  
 Զիափորներ զինավառ՝ մըրրկարշավ ու դաժան:  
 Ոմանք աղեղ ունեին և ոմանք լախտ ու տապար,  
 Ոմանց տեղերն ուղղաձիգ արեգակին տակ փառփառ  
 Հանկարծակի սարեն վեր փայլատակներ հայթոեցին:

Բակուր մեջտեղն էր անոնց՝ աշտանակած ահեղ ձին.  
 Կու գար լուծել իշխանեն վըրեժ, պատժել հարճն անխիղճ՝  
 Մորթելով հոն՝ փոխանակ զայն փըրկելու աղծապիղծ:  
 Կոչնականները բոլոր զինված էին արդ իր հետ.  
 Երեկ զինվով հըղփացած, այսօր արյան հակամետ:  
 Երբ Բագոսեն վերջ ուրեց զանոնք Արեսն արդընկեց՝  
 Հանդիսատես վատության հուշն հոգինին զայրագնեց.  
 Ըսկուտեղին արհավիրքը սյուններուն ընդմեջեն՝  
 Հետո իրենց սըրտին մեջ վառեց վրեժ մը գեհեն:  
 Տըրդատ երկար նայեցավ դեպ ի հրոսակն հալածիչ,  
 Աչքերեն թույն կ'հոսեին մոլուցքի զույգ մը կարիճ.  
 Գըրկին մեջ հարճը հանկարծ արձակեց ձիչ մը տրտում.  
 — «Ո՛վ իմ առպետս, ողորկեց, օ՛հ, մըտրակե անդադրում.  
 Գերին ըլլամ քու սուրիդ, անոնց գերին մ'ըներ զիս.  
 Ահա տեգերն ուղղեր են միահամուռ կոկորդիս՝  
 Ուր համբույրիդ տաքությունը դեռ, ավաղ, չէ պաղեր:» —  
 Ըսավ: Թաղեց ասպետին ծոցին մեջ գլուխն ոսկեհեր:  
 Հափրկ էր արդյոք ճակատիլ. ո՛չ. պիտի կոխվե ունենար  
 Անհավասար հաղթանակ, թեև վըսներ մ'հավասար:  
 Ու Տըրդատես թոթվեց սանձն երիվարին հողմառաց,  
 Երկրագըղորդ թընդաց դուռլթն, փռլին ելավ, և սուրհայ:  
 Ու ըսկըսավ հալածու՜մս հըսկաններուն սանձարձակ:

Ողորդեց հարձը նորեն. — «Ո՛վ իմ ասպետըս վրիժակ,  
 ես կը տեսնեմ անութիդ տակեն զանոնք՝ որ կ'իջնեն  
 Բըլուրն ի վար, աչքերնին մեյ մեկ անդունդ լուսեղեն.  
 Հարյուր ձիեր կարկառեր են վիզերնին դեպ ի մեզ,  
 Որոնց շունչերը կ'ելեն պինչերնեն տաք մոխրի պես:  
 Օ՛, մտրակեն, մտրակեն, երբ բռնեն զիս՝ վազրի նման  
 Պիտի կլծեն ոսկորներս, լակեն արյունըս լմանս:»  
 — «Հեղեղին մեջ մաղերուդ փակե աչքերդ, իմ Աղվոր,  
 եւ կուրծքիս վրա քընացիր օրորումովս այս հըզոր,  
 Անոնք այս տեղ չըհասած՝ մենք Շիրակ ենք գերկ գըրկի:»  
 Ու լայնալանջ երիվարը մըտրակեց ուժգնակի:  
 Անցավ խորունկ փապերեն, հեղեղատեն մեծագող,  
 Ընկըլմեցավ խորն հովտին, ճեղքեց ավաղն հրաբորբ, ք  
 եւ ուղղաբերձ, մեծաշունչ, համբարտակեց սարն հըսկա  
 Թափալելով հեռքն ի վար ապառաժներ՝ որոնց վրա  
 Լուսնանքման կուռ պայտերն իրենց զըրոշմը գըրին.  
 Կատարներեն լեռներուն թրուով նըման արծիվին՝  
 Ճապուռներուն մեջ որսն իր սեղմելով միշտ ավելի.  
 Ժայռերն ի վար խոյացավ ջըրվեժին պես փըրփրալի՝  
 Հորձանքին մեջ տանելով լերան ծաղիկ մը կարմիր՝  
 Իբրե դաշտին մեկ ընծան տըրված վիհին լայնադիր:  
 Ու մըտրակեց, մըտրակեց, երբ որ հանկարծ լլալեցան

Իր ետեկն սուլումները նետերու դավաճան:

— «Ասպետ, ասպետ, մահն հասավ մեր թիկունքին, կը շշա-  
ժ, կը վախնամ, կը վախնամ, ուսիդ վրայեն նետ մ'ահա  
չըրախայթոց օձի պես շըշըշալով սըլացավ:

Վայրկյան մըն ալ և անոնք կու գան կ'հասնին մեծարշավ:

Աղեղներեն լայնալիճ կարծես արյուն կը կաթի

Եվ կը ներկէ ձիերուն հորդ հորդ բաշերը կաթի:

Ասպետ, ասպետ, մի մատներ գիտ անոնց խեռ մոլուցքին,

Ես քու գերին, ձիդ ըլլա թող գերին քու մըտրակին:» —

Այսպես ըսավ Նազենիկ. լալ ըսելսավ դառնահեծ,

Եվ Տըրդատի կուրծքին վրա գըլուխը անջքան սեղմեց՝

Որ զըրահին մեջեն խակ կը լսեր տրոփը սըրտին:

Գանգուլներն իր հողմածուփ ձիուն բաշին կը խառնվին.

Ինք կը սարսռա վարմն ինկած աղափլի մ'հանգունակ:

Սարսափելի էր տարափը նետերուն մահարձակ՝

Որոնք ջուրի նըման օդն եռանդահորձ ձեղքելով

Կ'երթային մահը երգել փախըստական դուլգին քով:

Այն ժամանակ Տըրդատես գլուխն իր դարձուց մըրըկահեր

Եվ հեզնորեն մըռընչեց. — «Հալածեցեք, դէն, գայլեր,

Մինչև շընչատ վար կախվին ձեր լեզուները դողդոջ:

Արձակեցեք կըռնակիս ձեր ասեղները կընոջ:» —

Ըսավ, և նժույգն այս անգամ խթեց այնքան ուժգնալի՝

Որ արշավանքն եղավ շտապ մըտածումն ավելի:  
 Ահա ձորն ինք կը սուգի, սարին մյուսները կ'ելլեն.  
 Կը փայլակե ինք սարին, անոնք ձորին խորերէն  
 Կը փոթորկվին: Եվ նման զույգ մ'ամպրոպի մոլեկան  
 Լեռնահարթին վրա անգամ մ'այնքան իրար մոտեցան,  
 Որ պիտի շանթը ճայթեր, պիտի պոռթկար նետն արյուն՝  
 Եթե Տըրդատ ըզգեցած չլլար քեմուխտ հաստատուն:  
 Անոնց հանած փռչներն իրար միացան՝ կազմելով  
 Հըրատապ ամպ մը խարտյաշ՝ կարծես հըզի արյունով:  
 Այն ժամանակ պիտի հազիվ արձակեր տեղն իր Բակուր՝  
 Որ ճեղքե թիկն ասպետին, և հարձին լանջը փըրփուր,  
 Երբ վիհ մ'հանկարծ զօրսորկոր լերան գըլխուն փեռելված  
 Արհավիրքով մ'ընկըրկեց հալածողները սրենթաց:  
 Զոդպրեցավ Տըրդատես, և լեռն ի վար ուղղակի  
 Դիմեց անտառ մը մըռայլ՝ որ սահմանն էր Շիրակի:  
 Բակուրի խումբը կեցավ հռուհակուլ, ողեսպառ,  
 Կառողմության խարույկով ամբողջովին բոցավառ:  
 Ա՛լ հուսահատ՝ աղեղները պըրկեցին արըղնդեր,  
 Լարերն եղան լայնալիճ, անձրեկցին փըքիններ:  
 Նետե դատարկ կապարճներն եկան լեցվիլ վրեժ ու ոխ:  
 Հազիվ թե ծոցն անտառին կ'ընդգողեր զույգը փախչող՝  
 Բակուր իր նետը վերջին, հերձուկ մ'ամբողջ ժանրաշիթ,

Արձակեց անքան զորեղ, թիրախին անքան ճշգրիտ,  
 Որ օձի նման շըշալով թռևոտ լեզվովը սազապ  
 Տըրդատեսի անութին տակեն սողոսկ անցավ թափ,  
 Ու մըխվեցավ վարձակին ծոժրակին մեջ լուսաբուխ  
 Եվ հոն մընաց՝ հորդառատ մազերուն մեջ խորամուխ:  
 Երեք անգամ սըրսըփաց զարնված ազվոր աղափին,  
 Երեք անգամ հուզելով կարծես թողուլ իր հոգին:  
 Այս բանը ոչ Տըրդատես նրկատեց, ոչ ալ Բակուր.  
 Իրենց անզուսպ մոլուցքին փոշիներեն դարձած կույր.  
 Բնավ չըտեսան թե ինչպես կը փըշրվեր ու կ'իյնար  
 Դաշնակության ու գեղի աստվածակերտը զոհար.  
 Միայն նըժույգը վրընջեց, ու երեք հեղ սարսըռաց,  
 Երբ սառեցավ փորին վրա զարնըվող ոտքը հանկարծ:

## Դ.

Իջևան մ'է կառուցված սահմանին վրա Շիրակին,  
 Գործ արքունի ճոխության, մեծաղանգված, ահագին:  
 Այսն զըռներն իր կը բացվին ճամբուն վըրա հրատուչ,  
 Դուրս շընչելով զսվություն և աղբերուն հոտը հոր:  
 Արևուն զեմ կիզանուտ ապաստան մ'է մըշտազով  
 Ճամբորդներն հոն կը հասնին տոթեն թխացած ծոցերով  
 Եվ հոնքերնին լեռնավոր փոշիներով տապախարշ:

Հոն կը հասնին սայլերն հույլ գոմիշներէ ծանրաքարշ,  
 եվ կաղացող ջորիներն ու կարավանն էշերու՝  
 Քաղցրաողկույզ խաղողին կողովներուն տակ հըլու:  
 Հոն կը հասնին շաք ի շաք ուղտերը հաղթ՝ բեռնավոր  
 Տարաշխարհի զանազան համեմներով քաղցրածոր,  
 եվ կը պառկին ծընդածալ, խըրոխտավիղ կ'որոճան  
 Անծանոթ խոտն հեռավոր երկիրներուն արփախան:  
 Թանձրակառույց իջևանը բարիք մ'է երկնատու  
 Շրը կը հըսկէ ճամբուն վրա՝ որուն ծայրերը երկու  
 Հորիզոնին խորհուրդին մեջ տաղակորեն կ'անհետին,  
 երբ կը վառե անկենդան լըռության մեջ լեռնային  
 Իր պանդուխտի օջախներն ամեն մարդու անխըտիր  
 եվ հոն ամռան ջերմությունը մարելու ի խընդիր  
 Թանին ալիքը կ'հոսի երակներու մեջ ծարավ:  
 Բայց միշտ հասնիլն հոն, անկէ մեկնելէն քաղցըր չէ բնավ:  
 Ավասիկ այդ իջևանն է՝ ուր կու գա Տըրգառես  
 Ապաստանիլ նետերուն և արևուն դեմ հրակեդ:  
 Ծալքերուն մեջ թիկնոցին և կուրծքին վրա զբահակուն  
 Պարուրված է նազենիկ մարմարի պէս ջարդուղիչուր.  
 Այլեւս, ոհ, չի հուզեր ոչ մեկ սարսուռ, ոչ մեկ վանկ  
 Զըքնաղ մարմինն իր սառած լուսարձանի մ'հանդունակ:  
 —Արդյոք քնացամ (կը խորհի՝ առպիտն հասած իջևան)

Թե սարսփեն մարեցալ, ճըրագի պես, կուրծքիս վրան:  
 Ի՞նչպես կըրնա սալանալ այնքան եռանդ մ'հանկարծուն  
 Եվ տարածվիլ սըրտիս վրա շիրմաքարի մը հանգույն:—  
 Սորհելով անպես Տըրդատ վար կը ցատկէ նըժույզեն  
 Եվ կ'իջեցնէ վարձակն ալ, բայց աչքերն իր կը տեսնեն  
 Մաղբերուն մեջ Բակուրի նեան ըսպաննիչ, արքուն հիւր՝  
 Որ հոսած է ծոճրակեն ժապավենի պես կարմիր:

Կընոջ մարմինը անշունչ դիրկը կ'իյնա ցըրտագին.

Կատաղություն անավոր ասպետական խաբկանքին...

Մաղբն ամբողջ կը քրտմին՝ երբ սիրտն անոր կը տեսնե  
 Տիեզերքի մը սըրտին նըման՝ դադրած արոփելէ,

Երբ կը խորհի թե կինն այդ մեկ թարթափին մեջ աչքին

Գեղեցկության հեթանոս ունեւր դանձերը անդին,

Թե իր մարմինն էր լոգցած երկնի շողովը անշեջ,

Մեղք ունեւր իր թուշին տակ, լույս ունեւր իր ծիծին մեջ.

Եվ իր ձեռքին ու ոտքին մատերուն ծայրն էր խրտացած

Տիեզերքն այս հարդարող ձարտարությունն առեղծված.

Եվ խորհեցալ վերջապես՝ որահին մեջ Բակուրին

Աստվածացումն իր միսին, փոթորկումները պարին,

Եվ առջի հեղ ըլլալով ասպառաժ մարդն այդ լացավ...

— Ո՛վ պատրանքի արցունքներ հերոսներուն մեծնամբալ,

Որոնք երբեմբն սրբախ խորեն կ'հոսին տրեքամած  
 Հին օրերու հաղթութեան պըսակներուն վրա դեղնած:—

Ե.

Բարախ մը կար հինավուրց՝ դոր ձեռքերովն իր բարի  
 Իջեանին քով տընկեր էր Դիցանույշ մ'անտառի.  
 Սակայն այդ օրն ոտտ առ ոտտ ան կը չորնար տրտմորեն.  
 Տերեւներն իր դալկահար հողին վրա ողբալեն:  
 Ո՛վ գիտե՞սք մըրրկածուփ գիշերվան մեջ Արամազդ՝  
 Զարկեր, պատուեր էր անոր սիրտն իր շանթով մեծասաստ.  
 Եվ գըլուխն իր գեղուղեշ՝ որ կը հասներ արեին՝  
 Արդ սոսափներ չէր երգեր, կը նիզակվեր դեպ երկին:  
 Հոն, ահա այդ բարախին շուրջը եկան հավաքվիլ  
 Անտառաբնակ չորս քուրմեր՝ հագած կընգուղ և փանջիլ:  
 Ու Տըրգատի հրամանով, անոր բունին ճիշտ ներքե,  
 Միահամուռ փորեցին Նազենիկի փոսը սև.  
 Ու երգեցին Աստղիկին: Տըրգատ սըրտեն շանթահար՝  
 Անոր դեռ թարմ գիական առած գրկին մեջ կու լար:  
 Երբ զայն փոսին հանձնեցին՝ մաղերուն մեջ շաղապատ  
 Դեռ Բակուրի նետն ոսկի կը փայլակեր լուսացայտ:  
 Իջեանին քով տնկված վաղընջական այն բարախ

Վերջնձյուղում մ'ըստացավ՝ բուժելով վերքն իր սրտին՝  
 Երբ որ Հաբճին լույս մարմնույն ավիշներով կենսահորդ  
 Թաթախվեցան հոգին տակ արմատներն իր խորդուրորդ,  
 Եվ ըսվեցավ թե անոր տերևուտքին մեջ դողդոջ  
 Զըքնաղ հոգին վարձակին բընակեցավ դար մ'ամբողջ,  
 Լուսընկային ժլպտեցավ, ծոճրակին վերքը տվավ ցույց,  
 Հովերուն հետ պար եկավ, բամբուռներն չիլ՝ հնչեցուց:

1910 թ.

Սեբաստիա, Բրչնիկ



Շապինը ճկարիչ՝ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Պատ. խմբագիր՝  
Ս. ՏԱՐՈՆՅԻ

Վ.Ֆ. 10979. Պատվեր 450. Տիրաժ. 4000.

2 տպագր. մամ. հեղ. 1 մամ.

Ստորագրված է տպագրության 25 VI—1946 թ.:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչության  
№ 3 տպարան, Ալլահվերդյան № 65, Երևան, 1946 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042025

ԳԻՆԸ Ֆ.Ռ.

